Ց. Բուդաղեան (դաշ.). — Պնդում են, պարոնայք պատգամաւորներ, թէ Ադրբէջանում խորհրդային իշխանութիւն է: Ինչո՞ւ չէ: Եթէ Լեւոն Թումանովը կարող է Լեւոն Թումանեան դառնալ, ինչու Համիդ Սուլթանովը չի կարող կոմունիստ դառնալ (ընդհանուր ծիծաղ): Մեզ խորհուրդ են տալիս եղբայրական ձեռք մեկնել Ռուսաստանին, բայց հետաքրքրական է իմանալ, թէ այդ ե՞րբ է, որ մենք թշնամական ձեռք ենք մեկնել այդ նոյն Ռուսաստանին:

Մեր մեղքը չէ նաև այն, որ ունենք մի սրբութիւն սրբոց՝ անկախ Հայաստանի գաղափարը (ծափեր):

Մեզ հետ չխօսեցին օտարները, նրանք լքում են մեզ: Ոչինչ, թող լքեն, մենք ունենք մեր հարազատը՝ տաճկահայ հատուածը, որ արիւնով միացաւ մեզ և որի հետ միասին մենք կարող կը լինենք պաշտպանել մեր սրբութիւն սրբոցը (աղմկալի ծափահարութիւն):

Էսէրները խօսում են ժողովրդի ապահովութեան մասին. ապա ի՞նչ է անում կառավարութիւնը, ի՞նչ է անում հայ ժողովրդի հարազատ դաւակը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, չէ՞ որ նրանք ապահովութեան գործն են դարձնում իրենց անդուլ աշխատանքներով:

Ասում են նաև թէ հրաժարուեցէք իշխանութիւնից, բայց ո՞ւմ տանք երկրի ղեկը, ո՞րն է այն ուժը, որ պիտի հուժկու բազուկներով վարէ մեր նաւը. կա՞յ այդ ուժը, պարոնայք էսէրներ: Հայ դեմոկրատիան վաղուց հանդէս է բերել իր վճռական կամքն ու յաղթ ուժը, յանձինս Հ. Յ. Դաշնակցութեան, որ այժմ երկրի ղեկավարն է ու պիտի մնայ դալիք օրերին ևս (բուռն և աղմկալից ծափեր):

Վ. Նաւասարդեան (դաշ.). — Դիմում եմ ձեզ, պարոնայք պատգամաւորներ, և ձեզ հետ մէկտեղ Հայաստանի բազմահազար քաղաքացիներ, հայրենիքը վտանգի մէջ է: Հէնց այս բոպէին, երբ դուք քննութեան էք առնում Բաքուի նօտաները, թափւում է արիւնը հայ մարդու՝ Ղարաբաղի և Զանգեզուրի բարձունքներում: Զկայ արդէն Բալլուջան՝ զարդը Խաչէնի, աւերւել է Շօշուն՝ գոհարը Վարանդայի, սրածւել են պատմական Գիւլիստանի չէն ու գեղեցիկ գիւղերը, չկայ անառիկ և հեքիաթային բերդն Անդրկովկասի իր ողջ հայկական մասով՝ Շուշին, և, վերջապէս, սքանչելի մէկ հատուածը հայ ժողովրդի. նա այսօր դտնւում է թուրք-թաթար եաթաղանի տակ: Ո՞ւր է ձեր կամքը վճռական:

Հայկական բաղխումն է արևելքի ու արևմուտքի. այդ բաղխման մէջ երկու դերակատարների՝ ռուսական բոլշևիզմի և Թիւրքիայի մասնակցութիւնն ակնյայտ է, ակնյայտ է և այն, որ մեր ճակատի դերակատարը Թիւրքիան է, Թի՛ւրքիան, որ մեր ժողովրդի մի ամբողջ հատուածը դրեց հողի տակ:

Մեզ խոհականութեան և համակերպելու դասեր են ուղում տալ՝ կարծելով, թէ այդ մասին մենք ոչինչ չդիտենք: Ո՛չ, այդ դիտենք թէ մենք և թէ մեր ողջ անցեալը: Հայ հասարակական զարգացման պատմութիւնն ընթացել ու դարբնւել է երեք ուժերի հզօր ազդեցութեան տակ: Այդ ուժերից մէկը համակերպողների մեծաթիւ բանակն է եղել, որն ըմբոստացման և ընդվզումի սրբազան իրաւունքն այլոց վերապահելով՝ շարունակ իր վիզն է ճկել ու շարունակ սրածւել: Ապա դեր է կատարել մեր կեանքում լրտեսների, կաւասների, դաւաճանների ու կաշառուածների փոքրաթիւ խմբակը, որը անողոք հալածւել, հալածւում է ու պիտի հալածւի մեր միջից: Եւ, վերջապէս, եղել է նաև մի ուրիշ բանակ, որը դարերի դառն փորձերից եկել է այն վերջնական և կուռ համոզման, որ հայ ժողովրդի միակ փրկու-